

Աննա Կնյազյան

Սյուզաննա Հարությունյան

ԵՊՀ

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ

Սույն հոդվածում քննարկվում է գենդերային ինքնության ձեռքբերումը, որը տեղի է ունենում ըստ որոշակի համակարգի: Գենդեր հասկացությունը, ըստ էության, բարդ հանրամշակութային երևույթ է՝ հասարակության կողմից սղամարդու և կնոջ դերերի, վարքի, հոգևոր և հուզական բնութագրերի տարբերությունների շրջանառման, և բուն արդյունքի՝ գենդերի սոցիալական կառուցատարրի առումով: Գենդերային դերերն ու նորմերը չունեն համակողմանի բովանդակություն և տարբեր հասարակություններում զգալիորեն տարբերվում են: Այդ իմաստով սղամարդ կամ կին լինել բնավ չի նշանակում բնությունից տրված որոշակի հատկություններով օժտված լինել, այլ նշանակում է կատարել քեզ վերապահված գենդերային դերը և համապատասխանել որոշակի ձևանմուշներին:

Բանալի բառեր: *գենդեր, գենդերային ինքնությունը, սեռադերային ինքնություն, գենդերային դեր, կարծրատիպեր:*

Գենդերի կառուցումը մարդու կողմից իրականանում է որոշակի համակարգի հանրայնացման, աշխատանքի բաժանման և հասարակության մեջ ընդունված մշակութային նորմերի, դերերի ու կարծրատիպերի, ինչպես նաև սեփական գենդերային ինքնության գիտակցման միջոցով: Տղամարդկանց և կանանց մասին սոցիալական պատկերացումները վերաբերում են նրանց սոցիալական վարքագծի նորմերին: Վաղուց ի վեր հայտնի է, որ յուրաքանչյուր կոնկրետ հասարակության կազմակերպվածության գործում մեծ նշանակություն ունի սեռերի դերաբաշխումը: Սակայն միայն վերջերս ենք սկսել հասկանալ, թե որքան դժվար է պարզել յուրաքանչյուր սեռի առանձնահատկությունը:

XX դարի 80-ական թվականներից սկսած՝ Հ. Թեջֆելի և Ջ. Թերների սոցիալական նույնականության տեսության համատեքստում գենդերային ինքնությունը մեկնաբանվում է որպես անձի սոցիալական նույնականության ենթակառույցներից մեկը (առանձնացվում են նաև էթնիկ, մասնագիտական, քաղաքացիական և սոցիալական ինքնության այլ կառուցվածքներ) (Tajfel & Turner 1986: 7-24):

Մինչև վերջին ժամանակներս ռուս հետազոտողների՝ գենդերային նույնականության ուսումնասիրությանը նվիրված աշխատություններում օգտագործվում էին սեռադերային ինքնություն, սեռադերային կարծրատիպեր, սեռադերային հարաբերություններ եզրույթները (B. C. Areeb; И. С. Кош և այլք): Սակայն առաջին իսկ հայացքից մոտ

հասկացությունները (*օրինակ՝ գենդերային ինքնությունը և սեռադերային ինքնությունը*) հոմանիշներ չեն:

Գենդերային ինքնությունը ավելի լայն հասկացություն է, քան *սեռադերային ինքնությունը*, քանի որ գենդերը ներառում է ոչ միայն դերային հայեցակերպը, այլև, օրինակ, մարդու կերպարն ամբողջովին (սանրվածքից մինչ արդուզարդի առանձնահատկությունները): Նույն կերպ գենդերային ինքնություն հասկացությունը հոմանիշ չէ սեքսուալ ինքնության հասկացությանը (գենդերը ոչ այնքան կենսաբանական հասկացություն է, որքան մշակութային, սոցիալական): Սեքսուալ ինքնությունը կարող է բնութագրվել մարդու ինքնաընկալման ու ինքնապատկերացման տեսանկյունից գենդերային նույնականության կառուցվածքում նրա սեքսուալ վարքի համատեքստում:

Հետազոտողները առաջադրում են սեռային ինքնություն ձեռքբերելու տարբեր նմուշօրինակներ: Այսպես օրինակ՝ Ի. Հոֆմանը ենթադրում էր, որ գենդերային կայունություն երեխայի մեջ ձևավորվում է հինգ տարեկանում, հետագայում միայն հարստանում է համապատասխան փորձով, վերարտադրվում է և ամրապնդվում: Գենդերային կայունությունը դառնում է անձնային անկապտելի հատկանիշ, որը վաղ է հաստատվում և մնում անփոփոխ ու անօտարելի (Goffman 1976):

Ժամանակակից սոցիալական հետազոտությունները ցույց են տալիս, որ վաղ տարիքում անձի հանրայնացումը հենվում է բնածին սեռային տարբերությունների վրա:

Մեկուկես տարեկանում երեխաները սկսում են իրենց նույնականացնել որոշակի սեռի հետ: 3-4 տարեկանում երեխան արդեն գիտակցաբար տարբերում է շրջապատի երեխաների սեռը: Հինգ տարեկանում սկսում է գիտակցել սեռային տարբերությունները. տղաներն ու աղջիկները սեփական նախաձեռնությամբ ընտրում են տարբեր խաղեր և խաղընկերներ, ունենում են տարբեր հետաքրքրություններ և վարքի ոճեր (Koh 1988):

Մանդրա Բեմի մշակած ժամանակակից հայեցակարգը, որը ներմուծում է «գենդերային սխեմա» հասկացությունը, ցույց է տալիս, որ երեխաները այդ սխեմայի իմացական հնարավորությունները բավականին շուտ են սկսում օգտագործել, որպեսզի ըմբռնեն իրենց մասին նոր տեղեկատվությունը՝ կառուցելով այն նշյալ սխեմայի ցանցում: Այս տեսությունը առաջարկում է սուբյեկտիվության ձևավորման հիմնախնդրի իր լուծումը. «Ես»-ի առանձնացումը, «ես» հասկացության միաձուլումը գենդերային սխեմային (Bem 1981):

Կ. Բասին և Ա. Բանդուրան իրենց հետազոտություններում նկատում են, որ փոքր երեխաների սեռադերային վարքը վերահսկվում է դրսից՝ սոցիալական ճնշմամբ ու նորմերով, սակայն ավելի ուշ երեխան կառուցում է վարքի սեփական համակարգը: Դա տեղի ունենալուց հետո երեխան սկսում է վերահսկել իր վարքը: Վարքի նման սխեման նկարագրվում է գենդերային ինքնակարգավորման հանրա-իմացական տեսության մեջ (Bussey, Bandura 1992):

Ք. Մարտինի ու Ք. Հալվերսոնի հետազոտությունը ցույց տվեց, որ չնայած այն բանին, որ երեխաները տեղեկատվություն ստանում են երկու գենդերների ներկայացուցիչներից էլ, նրանք իրենց վարքում հակված են վերարտադրելու հենց այն նմուշօրինակները, որոնք համապատասխանում են իրենց գենդերին: Երեխաները հետևում են, թե տղամարդկանց և կանանց վարքում որքան հաճախ են հանդիպում գործունեության այս կամ այն տեսակները, իսկ հետո օգտագործում են ստացած տեղեկատվությունը նրա համար, որ կառուցեն սեփական վարքը: Ք. Մարտինը ու Ք. Հալվերսոնը այն անվանել են սեփական սեռի սխեմա (Martin, Halverson 1981): Այդ սխեման բաղկացած է սցենարներից և գործողության պլաններից, որոնք անհրաժեշտ են իրացնելու գենդերին համապատասխանող վարքը: Երեխաները հենց ի վիճակի են դառնում նույնականացնելու իրենց սեռը, նրանց մեջ շարժառիթ է ծագում նմանվելու իրենց խմբի մյուս անդամներին, և նրանք սկսում են ավելի ուշադիր հետևել իրենց խմբում ընդունված վարքի օրինակներին: Պարզվեց նաև, որ երեխան հավանաբար կսկսի նմանակել մեծահասակի վարքը, եթե կարծում է, որ այդ օրինակը ճշգրտորեն արտացոլում է կանոնավոր գենդերային-դերային վարքը:

Ըստ Լ. Կոլբերգի՝ նախադպրոցական տարիքում գենդերային կարծրատիպի ձևավորումը կախված է երեխայի ընդհանուր մտավոր զարգացումից, և այդ գործընթացը պասիվ չէ՝ առաջանալով ոչ թե սոցիալապես ամրապն-

դող վարժությունների ազդեցությամբ, այլ պայմանավորված է ինքնակարգադասման ի հայտ գալով (Kohlberg 1958): Նախադպրոցական երեխան յուրացնում է այն պատկերացումը, թե ինչ է նշանակում լինել տղամարդ կամ կին, այնուհետև բնորոշում է իրեն որպես տղա կամ աղջիկ, որից հետո ձգտում է վարքը համաձայնեցնել իր գենդերային ինքնության մասին պատկերացումների հետ (Մ. Ս. Կոհ 1988): Քանի որ մեծահասակները խրախուսում են տղաներին արական և փնովում՝ իգական վարքի համար, իսկ աղջիկների հետ վարվում հակառակ ձևով, երեխան սկզբում սովորում է զանազանել վարքի սեռաերկձևության նմուշները, այնուհետև կատարել համապատասխան կանոնները, և վերջապես, ներառում է այդ փորձը իր «ես-ի» կերպարում: «Ես» հասկացությին և մեծահասակների գենդերային ինքնությանը նվիրված հետազոտությունները ցույց են տալիս, որ գենդերային նույնականացումը անավարտ արդյունք է: Կյանքի ընթացքում այն լցվում է տարբեր իմաստներով՝ կախված սոցիալական և մշակութային փոփոխություններից, ինչպես նաև անձի սեփական ակտիվությունից: Եթե կենսաբանորեն նախաշնորհված սեռը համընկնում է սկզբնական շրջանում ձեռք բերված հանրայնացման հետ, և արդյունքում դրանք ամուր հաստատվում են անհատի իմացական, հոգեբանական, խոսքային ոլորտներում, ապա այդ դեպքում կարելի է հիմնավոր կերպով խոսել ձևավորված գենդերային կառույցի մասին:

Սկզբնական հանրայնացման և սեռատիպականացման փուլում գլխավոր դեր են կատարում ընտանիքը, հասակակիցների խմբերը, համապատասխան զանգվածային լրատվության միջոցները, նախադպրոցական մանկական հաստատություններն ու սկզբնական դպրոցը և այլ նշանակալի միջոցներ:

Հանրայնացման հաջորդ՝ երկրորդային փուլերում (17–25 տարեկան) տեղի է ունենում վարքի նորմերի ու ձևերի վերանայում, որը, որպես կանոն, կապված է սոցիալական հզոր փոխակերպումների հետ, որի հետևանքով անձը հայտնվում է ծայրահեղ և նախկին նորմերին անհարիր իրավիճակում, հատկապես կարևոր են կրթական ինստիտուտները, զանգվածային լրատվության միջոցները:

9-11 տարեկան երեխաների խոսքի հետազոտությունը իրականացրած Ե. Մ. Բակուշևայի կողմից ֆրանսերենի նյութի հիման վրա, ցույց է տալիս դպրոցական տարիքի տղաների ու աղջիկների հետաքրքրությունների բևեռացումը: Թեև խոսողները տարիքային տարբերություններ չունեին, սակայն պարզվեց, որ որոշ թեմաներ բացառապես «տղայական» են. տիեզերք, պատմություն, մեքենաներ, կենդանիներ, գրքեր, կյանքի տևողության խնդիրներ: Իսկ գուտ աղջկական քննարկման թեմաներ են դասընկերուհիների հետ փոխհարաբերությունները, տիկնիկները, հագուստը, սանրվածքը (Бакшьева 1995): Տղաներն ավելի հաճախ հիշատակում են մարդկանց ըստ զբաղմունքի տեսակի, վկայակոչում հայտնի անձանց անունները: Դպրոցական թեմատիկայով զրույցներից նրանք նախընտրում են

խոսել գնահատականների մասին, իսկ աղջիկների քննարկման թեման ավելի հաճախ իրենց ուսուցիչներն ու դասընկերուհիներն են: Աղջիկներն իրենց զրույցներում ավելի հաճախ նշում են տան անցուդարձի, ծնողների, սեփական զգացմունքների ու ապրումների մասին, քանի որ նրանք բնույթով ավելի նրբազգաց են ու տպավորվող, քան տղաները: Աղջիկների խոսքն ավելի հուզական է. աղջիկների խոսքում գործածված ձայնարկությունների ընդհանուր թիվը 1,58 անգամ գերազանցում է տղաների նույն ցուցանիշը: Կարելի է նաև մատնանշել աղջիկների առավելությունները լեզվական ընդունակությունների առումով. նրանց արտասանությունն ավելի սահուն է, նրանք ավելի հեշտ ու վստահ են յուրացնում ընդունված ձևերը, կոպիտ քերականական սխալներ թույլ չեն տալիս, տղաների համեմատ՝ խոսքում ավելի քիչ են դրսևորում անվճռականություն և դժվար ընկալողականություն: Աղջիկների ավելի զարգացած լեզվական ընդունակություններ ունենալու պատճառը ոչ թե ծագումնաբանական է, այլ սոցիալական. կյանքի առաջին տարիներից աղջիկների զարգացման պայմաններն ավելի նպաստավոր են, աղջիկներն իրենց առջև տեսնում են սոցիալական նմուշօրինակ (մայրիկին), որին պետք է ընդօրինակեն: Դրանից գատ, աղջիկների խաղերը պահանջում են ավելի շատ խոսքային ակտեր. իրենց երևակայական աշխարհում նրանք ավելի շատ են խոսում, հարցեր տալիս, բացատրում, սովորում, քան տղաները:

Ինչ վերաբերում է տղաների և աղջիկների խոսքային ռազմավարությունների իրացմանը, ապա այստեղ էլ ի հայտ են գալիս տարբերություններ: Տղաները, ընտրելով ավելի վերացական թեմա, իրենց իմացությունները ցուցադրում են մենախոսական ելույթներով, իսկ աղջիկներն ավելի շատ հակված են երկխոսության. նրանք ավելի հաճախ (երեք անգամ) անունով են դիմում իրենց զրուցակցին, նրանց խոսքը լի է շփումնաստեղծ դարձվածներով, զրույցի համար ընտրված թեմաները ենթադրում են զրուցակցի մասնակցություն:

Սեռային դերերը կառուցվում են. և՛ տղամարդիկ, և՛ կանայք ստեղծվում են, որպես այդպիսիք չեն ծնվում: Ընդ որում, անհրաժեշտ է նկատել, որ գենդերի կառուցումը ունի երկվեկտոր ուղղվածություն, մի կողմից՝ գենդերի կառուցման տեսության շրջանակներում՝ ընդգծելով փորձի յուրացման գործնական բնույթը, այն ստեղծում է ինքնին մարդը իր հանրայնացման գործընթացում (Ու. Բեքթ, Թ. Լյուկախ 1995), իսկ մյուս կողմից՝ մարդն իր վրա զգում է մշակութային-նորմատիվ ստանդարտների արդեն ձևավորված համակարգի, իր նույնականացման և որոշակի հասարակությունում իր վարքի վերաբերյալ կարծրատիպային պատկերացումների և գնահատականների ազդեցությունը (Parsons 1956): Հետևաբար, կառուցման գաղափարը շեշտում է փորձի յուրացման գործնական բնույթը: Սուբյեկտը ոչ միայն ստեղծում է գենդերային կանոններ ու հարաբերություններ, այլև յուրացնում ու վերարտադրում է դրանք:

Հասարակության մեջ առաջանում է վարքի նորմերի համակարգ, որը սահմանում է որոշակի սեռային դերերի կատարում, համապատասխանաբար առաջանում է պատկերացումների և կարծրատիպերի խիստ շարք այն մասին, թե որն է տղամարկայինը, որը կանացին տվյալ հասարակությունում:

Անգլիական գիտակցության մեջ գոյություն ունեն որոշակի կարծրատիպեր, որոնք կայուն հատկանիշներ են վերագրում տղամարդկանց և կանանց: Հասարակության կողմից պարտադրվող որոշ կարծրատիպեր կարելի է հստակորեն տեսնել լեզվում: Այդ կարծրատիպերը արտացոլում են լեզվակիր հանրության բնավորությունն ու մշակույթը: Գենդերային կարծրատիպերը մեր գիտակցության մեջ գործում են *ճիշտ է / սխալ է* սկզբունքով: Նշյալ նախադրյալները ձևավորում են որոշակի վարքագիծ, միևնույն հատկանիշներին տրվում են տարբեր գնահատականներ՝ կախված այն բանից, թե որ սեռին ենք վերագրում բնութագիրը: Այսպես օրինակ՝ եթե մենք կնոջը ասենք, որ նա ունի «տղամարդու խելք», ապա նրան հաճոյախոսություն կանենք: Ընդհակառակը՝ եթե մենք տղամարդուն ասենք, որ նա «կնոջ բնավորություն» ունի, ապա կվիրավորենք նրան: Ժամանակակից խոսակցական անգլերենից բերենք մի քանի օրինակ՝ համոզվելու համար, թե որ Ուոլթերնը է (արական թե իգական) գերակշռում այնտեղ: Անգլերենում այրականությունը արտահայտվում է այնպիսի բառույթներով, ինչպիսիք են *mankind, manpower, chairman, foreman: Man*

վերջածանցը ձևավորել է անգլերենում նաև այնպիսի նորակազմություններ, ինչպիսիք են *showman, statesman, outdoorsman* (որսի և բնության գրկում հանգստի սիրահար), *alphaman* (ֆանտաստիկ հերոս, որը իր հակառակորդ տղամարդկանց գերազանցում է արտաքինով, հարստությամբ, ազդեցությամբ): Անգլերենում *man* բառը ունի երկու իմաստ. այն կարող է նշանակել մարդ արարած (*human being*) կամ տղամարդ արարած (*male human being*): Ենթադրվում է, որ նախկինում սոցիալական ոլորտում տեղի ունեցած փոփոխությունների համաձայն՝ *man* բառը՝ որպես սեռային եզրույթ օգտագործելը հանգեցրել է ամենօրյա խոսքում *woman* բառի հաճախակի գործածության բացառման, որը անգլիական հասարակությունում կնոջ դերի խեղաթյուրված պատկերացման հետևանք է: Այս տեսանկյունից գենդերային հատկանիշն օգտագործող լեզուն կապված է անգլիական հասարակությունում տղամարդկանց ու կանանց դերերի վերաբերյալ որոշակի կարծրատիպերի հետ: Իգական սեռ նշանակող այն բառերի օգտագործումը, որոնք վերաբերում են զարգացման ավելի վաղ շրջանում գտնվող կենդանի արարածներին (*girls, babes, chicks* և այլն), վկայում է անգլիացիների այն կարծրատիպային համոզմունքը, ըստ որի կնոջ բանականությունը գտնվում է զարգացման ավելի ցածր աստիճանում: Կնոջը անգլերենում բնութագրում են, նախ և առաջ, արտաքինով. (օրինակ՝ *“thunderchicken”* – անհրապույր կին, *“dollybird”* – տիկնիկ, գեղեցիկ աղջիկ), վարքով (օրինակ՝ *“clingingvine”* –

թույլ անօգնական կին, որը լիովին կախված է ամուսնուց), սոցիալական դերով, մասնագիտությամբ (օրինակ՝ *“policewoman”* – կին ոստիկան): Մասնագիտությունների մեծ մասի անվանումներն անգլերենում առհասարակ չեն նախատեսում իգական տարբերակ: Այդ մասնագիտության տեր կնոջը նշելու համար պետք է դիմել տարբեր սպասարկու բառերի օգնությանը՝ *lady-professor, medicine women, she-doctor*: Անգլերենում զգալի են կնոջ արատները բնութագրող բառերը (*scarletwoman, hooker, callgirl, hustler, workinggirl, b-girl, ladyoftheevening, fancylady, streetwalker*):

Պակաս ուշագրավ չեն անգլիական ասացվածքները, որոնք ընդհանուր առմամբ հաստատում են հասարակության նախապաշարմունքներն ու նախասիրությունները՝ աշխարհը բաժանելով երկու տարածքի՝ տղամարդկանց և կանանց, ընդ որում՝ տղամարդու համեմատ կնոջ սոցիալական նվազ ակտիվությունը ևս մեկ անգամ հաստատելու միտումով: Լեզուն ինքն է պարտադրում սոցիալական պատկերացումների որոշակի կարծրատիպեր՝ *a woman of pleasure; a woman of quality*:

Սեռի հանրամշակութային պայմանավորվածությունը, դրա ծիսականացումը օրինաչափ են դարձնում գենդերային կարծրատիպերի հետագոտումը և դրա արտացոլումը լեզվում: Տվյալ մշակույթում սեռերից յուրաքանչյուրին վերագրվում են մի շարք պարտադիր նորմեր, գնահատականներ և կարծրատիպեր, որոնք կանոնակարգում են գենդերային վարքագիծը: Կարծրատիպերը այս կամ այն չա-

փով ազդում են յուրաքանչյուր մարդու վրա:

Անգլերենում այնպիսի ածականներ կան, որոնք հիմնականում կիրառվում են կանանց առնչությամբ, օրինակ՝ *beautiful, pretty, alluring* և անհամեմատ ավելի քիչ՝ տղամարդկանց: Դրանցում սովորաբար ներառված են իմաստներ, որոնք մատնանշում են կնոջ թուլությունները, զիջողատությունը, սոցիալապես անպաշտպան լինելը, սակայն հասարակությունը ավանդաբար բնութագրերի հենց այդ հավաքածուն է առավել արժեքավոր համարում կանանց համար: «Մարդկության թույլ (նույնն է թե՛ գեղեցիկ, լավագույն և այլն) կես» (*the weaker sex, the fair sex*) շրջասույթներում գլխավոր իմաստակիր բառը մակդիրն է: Իսկ *lyzu* բառի իմաստը անցնում է երկրորդ պլան:

Ազգային գիտակցության ու մշակույթի ձևավորման հիմքում մարդու վարքագծի կարգավորիչների դերում հանդես են գալիս ինչպես բնածին, այնպես էլ հանրայնացման գործընթացում ձեռք բերվող գործառույթներ՝ մշակութային կարծրատիպեր, որոնք յուրացվում են՝ սկսած այն պահից, երբ մարդն սկսում է նույնականացնել իրեն որոշակի էթնոսի, որոշակի մշակույթի հետ և իրեն ընկալել որպես դրանց մասնիկ: Կարծրատիպերի ձևավորման հարցում կարևոր դեր են խաղում մարդկանց կյանքում որոշակի օբյեկտների, երևույթների հաճախադեպությունը, որը հաճախ արտահայտվում է ավելի տևական մարդկային շփումներով հենց այդ առարկաների հետ, քան այլ առարկաների, որը և հանգեցնում է նրանց կարծրատիպացմանը:

Այսպիսով, վերոշարադրյալը հիմք է տալիս ևս մեկ անգամ շեշտելու, որ գենդերը, ըստ էության, սոցիալական վերափոխումների համախումբ է, այլ ոչ թե ի բնե ամրագրված իրողություն: Մենք չենք կարող հարյուրտոկոսանոց վստահությամբ ասել, որ գենդերային տարբերությունները կենսաբանորեն կարելի է հիմնավորել: Ծնված օրվանից մարդու գենդերային դերի վրա ազդում են հսկայական թվով արտաքին գործոններ: Նա հետևում է իր ծնողների և այլ մեծահասակների վարքին. ձգտելով ընդօրինակել իր գենդերի մարդկանց: Զանգվածային լրատվության միջոցները յուրաքանչյուր հասարակությունում արականության և իգականության կարծրատիպեր են ստեղծում, որոնք հնարավոր չէ թողնել առանց ուշադրության: Մարդիկ մեծանում են՝ ձգտելով հիմնականում համապատասխանել իրենց դերին, լինել իսկական տղամարդ կամ կին՝ բնավ ոչ միշտ համաձայնելով այն ամենին, ինչ նրանց թելադրում է հասարակությունը:

Գրականության ցանկ

1. Bem, S.L. (1981) *Gender Schema Theory: a Cognitive Account of Sex Typing// Psychological Review*. New York, p. 354-364.
2. Bussey, K., & Bandura A. (1992) *Self-regulatory mechanisms governing gender development. Child Development*, 63, P. 1236–1250.

3. Goffman, E. (1976) *Gender display// Studies the antropology of visual communication*, №3. P. 69-77.
4. Kohlberg, L. (1958) *The Development of Modes of Thinking and Choices in Years 10 to 16*. Ph. D. Dissertation, University of Chicago.
5. Martin, C.L., Halverson C.F. (1981) *A Schematic Processing Model of Sex Typing and Stereotyping in Children*. *Child Development*, p. 563-574.
6. Parsons, T. (1956) *Family, Socialization and Interaction Process*. London: Routledge.
7. Tajfel H. & Turner J. C. (1986) *The Social Identity Theory of Intergroup Behavior*. In S. Worchel & L. W. Austin (Eds.), *Psychology of Intergroup Relations*. Chicago: Nelson-Hall, 2nd ed., pp. 7-24.
8. Агеев, В. С. (1983) *Психология межгрупповых отношений*. М.: Изд-во МГУ.
9. Бакушева, Е.М. (1995) *Социолингвистический анализ речевого поведения мужчины и женщины (на материале французского языка)*. Автореф. дис. ... канд. филол. наук. М.
10. Бергер, П., Лукман, Т. (1995) *Социальное конструирование реальности/ Пер. с англ. Е.Д.Руткевич*. М.: Медиум.
11. Кон, И.С. (1988) *Ребенок и общество*. М.

ANNA KNYAZYAN - The Acquisition of Gender Identity as a Social Phenomenon - This article discusses the acquisition of gender identity which is in accordance with a particular system. In fact, gender - is a complex socio-cultural process: the production of a society of differences in male and female roles, behavior, mental and emotional characteristics. Gender identity is a base structure of social identity which characterizes the individual in terms of his belonging to the male or female group. In every society there is a system of standards of behavior. Gender norms and roles do not have a universal content and vary in different societies.

Key words: gender, gender identity, sex-role identity, gender role, stereotypes.

АННА КНЯЗЯН - Обретение гендерной идентичности как социальное явление - В данной статье рассматривается обретение гендерной идентичности, которая происходит в соответствии с определенной системой. В сущности гендер – это сложный социокультурный процесс: продуцирование обществом различий в женских и мужских ролях, поведении, ментальных и эмоциональных характеристиках. Гендерная идентичность является базовой структурой социальной идентичности, которая характеризует индивида с точки зрения его принадлежности к мужской или женской группе. В каждом обществе существует система норм поведения и

соответственно возникает ряд представлений о том, что есть мужское и женское в данном обществе. При этом гендерные нормы и роли не имеют универсального содержания и различаются в разных обществах.

***Ключевые слова:** гендер, гендерная идентичность, полоролевая идентичность, гендерная роль, стереотипы.*